

արեւելեայց հետ, այլ եւ դաւանութեամբ կը տարբերէին արեւմտեան քրիստոնեաներէ, որոնք Հռոմայ Եկեղեցւոյ ենթարկուած էին: «Հերձուածող» անունը, որով կ'որակուէին արեւելեայք արեւմտեաններէն, պատճառ էր յաճախ ունենալու անոնց հանդէպ ուրիշ վերաբերմունք: Արեւմտեան շուկայի մէջ ճանչցուած էին Հայերը — անշուշտ գլխաւորաբար հպատակութեան, բայց նաեւ զգեստաւորութեան եւ այլալեզու բարբառին համար «պարսիկ» յորջորջմամբ:

Քրիստոնէի եւ քրիստոնէի մէջ դաւանարանական խտրութիւնը բառնալու եւ արեւմտեանց քով համակրութիւն եւ պաշտպանութիւն գտնելու համար հրապարակի վրայ դրին հայ վաճառականները Միութեան հարցը: Վաճառականներու ազդեցութեան ընդդիմանալ չէին կրնար հայ Եկեղեցականները, որոնք իրենց նիւթական գոյութիւնը անոնց առատաձեռնութեան կը պարտէին: Անոնք էին Եկեղեցիներ կառուցանողներն ու կղերականները զգեստաւորողները:

Միութեան հարցը օրուան պահանջը դարձաւ մանաւանդ Այրարատեան դաշտի բնակիչներու բռնի Պարսկաստան տեղափոխուելէն ետքը: Երկրին մէջ աղքատութիւնը կ'իջխէր, եկեղեցիները կողոպտուած էին սպասներէ. իսկ տեղահանուած ժողովուրդը Պարսկաստանի մէջ յետին կարօտութեան մատնուած էր: Զուղայեցիք եղան փրկութեան ապաստանը. անոնք արտաքին աշխարհի հետ